ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2303-Ա « 20 » հունիսի 2024 թ.

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ, ՆՈՐՔ ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Ստեփան Վարդանյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 04.07.2023թ. հ.4704 և սեփականության իրավունքի 04.07.2023թ. հ.4705 վկայագրերի հիման վրա իրեն պատկանող, Նորք-Մարաշ, Նորք թիվ 5 պոլիկլինիկային հարող տարածքում գտնվող հողամասի սահմանները ճշտելու մասին, Երևանի քաղաքապետի 01.08.2023թ. հ.2256-Ա որոշումը և ՀՀ կադաստրի կոմիտեի 06/03/2024թ. հ.ԱՏ-06032024-01-0420 տեղեկանքը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորք-Մարաշ, Նորք թիվ 5 պոլիկլինիկային հարող տարածքում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում 750.0քմ /քննարկվող տարածքը նախկինում տրամադրվել է առանց կոորդինատային համակարգի և փաստացի նշված հողամասը նշահարելու արդյունքում համադրվում է կից սեփականության իրավունքով պատկանող հ.5 պոլիկլինիկայի զբաղեցրած և պարսպապատված հողամասի հետ/, որքան որ ամրագրված է ըստ օրենքի ժառանգության իրավունքի 04.07.2023թ. հ.4704 և սեփականության իրավունքի 04.07.2023թ. հ.4705 վկայագրերում:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածի համաձայն՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 5-րդ գոտում:

ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն՝ հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտում է:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/24140-24 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Նորք-Մարաշ, Նորք թիվ 5 պոլիկլինիկային հարող տարածքում գտնվող, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 04.07.2023թ. հ.4704 և սեփականության իրավունքի 04.07.2023թ. հ.4705 վկայագրերի հիման վրա Ստեփան Վարդանյանին պատկանող հողամասի սահմանները որոշվում են 750.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով՝ չեղյալ համարելով նախկինում թողարկված հ.664-2003 գլխավոր հատակագիծը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշման համաձայն, Նորք-Մարաշ, Նորք թիվ 5 պոլիկլինիկային հարող տարածքում գտնվող՝ 750.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ